



Ջուրը որպես Էկոլոգիական տարր


Քնարիկ Հակոբյան



Ջուրն ամենաարժեքավոր բնական
ռեսուրսն է: Այն զբաղեցնում է Երկրի
մակերեսույթի 2/3 մասը, եւ ջրի
առատության շնորհիվ է, որ մեր
մոլորակը կոչվում է նաեւ «կապույտ
մոլորակ»:

Ջրի որակ

Ջրի որակը կախված է հետազոտվող ջրի քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և ճառագայթման հատկանիշներից, որոնցից յուրաքանչյուրը շատ կարևոր է մարդկության համար: Այդ հատկանիշները սաև չափանիշներ են, որոնց շնորհիվ կարելի է որոշել, թե որ ջուրն է պիտանի:





Ստանդարտներ

Ստանդարտ սահմանելիս, տալիս են քաղաքական և գիտա-տեխնիկական լուծումներ, թե ինչպես պետք է օգտագործվի ջուրը:

Ջրի որակի մանրամասն հետազոտման համար անհրաժեշտ է չափել կամ հաշվել ջրի.

- կոշտությունը,
- pH-ը,
- էլեկտրահաղորդականությունը,
- աղերի կոնցենտրացիան:

Նաև պետք է հաշվի առնել ջրի անսովոր ֆիզիկական և քիմիական, ինչպես նաև լուծիչ հատկությունները:

Ջրի աղտոտման ուղիները

Ջուրը կարող է աղտոտվել ոչ կենտրոնացված ջրամատակարարման աղբյուրների ոչ բավարար վարակազերծման պատճառով: Բաց ջրամբարների ջուրը կարող է աղտոտվել տնտեսա-կենցաղային և արդյունաբերական կոյուղու կազմակերպված արտահոսքերով ևս: Բաց ջրամբարը որպես անասունների ջրելատեղ օգտագործելով:


Հողի մակերեսի աղտոտվածությունը կարող է հանգեցնել ստորգետնյա ջրերի աղտոտման, հատկապես՝ այն վայրերում, ուր բարձր է գրունտային ջրերի մակարդակը:

Ջրի աղտոտման պատճառ կարող են դառնալ ջրի այն աղբյուրները, որոնք չունեն սանիտարական պաշտպանական գոտի եւ պատշաճ ձեւով չեն շահագործվում:

Բնական-օջախային հիվանդությունների տարածման մեջ մեծ դեր են խաղում կրծողները, որոնք ամռանը վիստում են բաց ջրամբարների ափերին:

Ջրի աղտոտումից առաջացած հիվանդություններ

Աղտոտված ջրի միջոցով փոխանցվում են տարբեր վարակիչ հիվանդություններ, որոնցից հատկապես վտանգավոր են աղիքային հիվանդությունները (խուլերա, որովայնային տիֆ, պարատիֆեր, դիզենտերիա եւ այլն): Ջրային ծագման հիվանդություններից են նաև լեպտոսպիրոզը, մալարիան, զանազան հելմինթոզները, ինչպես նաև սիբիրյան խոցը, տուլարեմիան, տուբերկուլոզը եւ այլն:



Ջրով փոխանցվող հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումներ

- Պահպանել անձնական հիգիենայի կանոնները
- Խնամքով եւ հնարավորինս հաճախ օճառով լվանալ ձեռքերը, հատկապես՝ ուտելուց առաջ եւ գուգարանից օգտվելուց հետո
- Խմելու համար ծորակից ջուր վերցնել 10-15 րոպե հոսելուց հետո, քանի որ առաջին րոպեներին ջուրը կարող է աղտոտված լինել
- Հետեւել սննդի պահպանման եւ պատրաստման կանոններին
- Սննդի պատրաստման եւ կենցաղային կարիքների բավարարման համար, օգտագործել ջրի ստուգված աղբյուրներից վերցված ջուրը
- Ջուր չխմել պատահական աղբյուրից
- Քաղաքից դուրս մեկնելիս՝ վերցնել ջրի բավարար պաշար
- Խուսափել աղտոտված ջրամբարներում լողալուց, փոխարենը՝ լողալ միայն այդ նպատակի համար հատկացված վայրերում
- Աղիքային հիվանդությունների բռնկումների ժամանակ, ջուրն օգտագործել միայն եռացնելուց հետո